ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 ապրիլի 2025 թվականի № 123-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 54-րդ հոդվածի 3-րդ մասի, 244.9-րդ և 305-րդ հոդվածների, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2025 թվականի հունվարի 31-ի № 30-Ա որոշման համաձայն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի պետի 2025 թվականի մարտի 21-ի զեկուցագրով ներկայացված 2025 թվականի մարտի 04-ի № 01/01 տեղեկանքը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 07-003-0013-0077 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելը չկանխելու համար (որպես աղբավայր օգտագործելը) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավար ***Հակոբ Բալասյանի*** նկատմամբ նշանակել տուգանք՝ *150.000 (մեկ հարյուր հիսուն հազար)* ՀՀ դրամի չափով:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավար *Հակոբ Բալասյանը* պարտավոր է սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 15 օրյա ժամկետում նշանակված տուգանքի գումարը վճարել կենտրոնական գանձապետարանի *900005243119* հաշվեհամարին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում *Հակոբ Բալասյանին* որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ա. ՍԱՀԱԿՅԱՆ**

2025 թվականի ապրիլի 7
ք. Հրազդան